туристической арене более конкурентоспособным, необходимо прояснить проблемы и обработать методы их решения. Нужно развивать инфраструктуры, улучшать дороги, культурно-исторические памятники и особо охраняемые природные территории обеспечивать необходимой туристической инфраструктурой и более эффективно использовать их существование. В частности, сложность доступности Армении, ценовая политика на рынке армянской авиации, маркетинговые пробелы и внутренняя инфраструктура, особенно плохое состояние дорог, препятствуют развитию туризма.

KRISTINE TATOSYAN

ISSUES OF IMPROVING THE COMPETITIVENESS OF TOURISM IN RA

Key words: *tourism competitiveness, infrastructure, support, price competitiveness, branch of economy.*

According to the Tourism competitiveness report of Armenia, our country hasimproved its position for the recent years and continues to implement an active policy concerning the solution of problems that exist in the sphere of tourism. It's necessary to develop the infrastructures, improve the roads, andalso support historical-cultural monuments as well as special controlled areas of nature with appropriate infrustructures, for their better utilization. In particular, sophisticated accessibility to Armenia, adverse pricing policy in aviation, drawbacks in marketing and most importantly unfavorable road conditions hinder the development process in the field.

ԱԼԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ
Տնտեսագիտություն,
բակալավրիատ, 2-րդ կուրս

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հիմնաբառեր. *աղքատություն, ծայրահեղ աղքատություն, աղքատության խզվածքի համաթիվ, աղքատության տարածաշրջանային կառուցվածք*

Աղքատությունը երկրի տնտեսությունը բնութագրելու հիմնական ցուցանիշներից մեկն է: Պետությունները իրենց հիմնական միջոցները նպատակաուղղում են երկրում աղքատության մակարդակի նվազեցմանը: Աղքատության հաղթահարման մի քանի միջոց կա, օրինակ՝ տրանսֆերտների վճարում, գյուղատնտեսական ծրագրերի իրականացում, արտաքին առևտրի զարգացում և այլն: ՀՀ-ում աղքատության խնդիրը մեծ է չորս մարզերում՝ Շիրակ, Տավուշ, Լոռի և Կոտայք:

Աղքատությունը մի իրավիճակ է, որում հայտնված մարդիկ կամ հասարակությունը ունեն քիչ ֆինանսական եկամուտներ և ապրում են կյանքի ոչ բնականոն պայմաններում: Կյանքի բնականոն պայման ասելով անհրաժեշտ է հասկանալ նվազագույն կրթություն ստանալու և առողջության բավարար մակարդակ ապահովելու սահմանափակ հնարավորություն և տարբեր ռիսկերի նկատմամբ պաշտպանվածության ցածր աստիճան:

1820 թ. աշխարհի բնակչության (1,1 միլիարդ մարդ) գերակշռող մեծամասնությունը ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ: Վերջին 200 տարիների ընթացքում տնտեսական աճը կերպափոխեց ողջ աշխարհը, իսկ աղքատության մակարդակը սկսեց աստիճանաբար նվազել: Բնակչության թվաքանակի աննախադեպ աճի տեմպերի պայմաններում աշխարհի երկրներին հաջողվել է ավելի ու ավելի շատ մարդկանց փրկել սև աղքատությունից:[1]

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղքատության ազդեցությունները տնտեսության և անհատի վրա տեղի են ունենում բազմաթիվ ուղղություններով (սոցիալական, տնտեսական, հոգեբանական և այլն)՝ աղքատությունը դասակարգվում է երկու խմբում՝ տնտեսական և ոչ տնտեսական աղքատություն:[2] Ոչ տնտեսական աղքատության բնորոշիչներն են վատ առողջությունը, կրթական ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը, այն է՝ գործնականում սեփական խնդիրների մասին հայտնելու անկարողությունը: Տնտեսական աղքատությունը վերաբերում է բնակչության ստացած եկամուտներին:

Երկրներում աղքատության առաջացման պատճառները տարբեր են. պատմական գործոններ, պատերազմներ և քաղաքական անկայունություն, պետական պարտք, բնական աղետներ:

Աղքատությունն ունի մի շարք բացասական սոցիալական և տնտեսական հետևանքներ: Այն մեծապես ազդում է բնակչության կրթական մակարդակի վրա: Սա տեղի է ունենում այն պատճառով, որ կրթությունը պահանջում է որոշակի ծախսեր, և աղքատ բնակչությունը, չունենալով գումար, հրաժարվում է դրանից:

Աղքատությունը կարող է ազդել երկրում հանցագործությունների թվի աճի վրա: Ընդունված է կարծել, որ աղքատ ընտանիքի երեխաները ավելի են հակված հանցավոր խմբերին միանալու, քան հարուստ ընտանիքների երեխաները:

Աղքատությունը երկրների համար հավելյալ ծախսեր կատարելու պատճառ է դառնում: Օրինակ, Մեծ Բրիտանիան աղքատներին տրվող նպաստների համար տարեկան ծախսում է 25 միլիարդ դոլար:

Աշխարհում աղքատության վերաբերյալ հիմնական տեղեկատվության աղբյուր են համաշխարհային բանկի վերլուծությունները, որոնց համաձայն՝ աղքատության մակարդակի գնահատման երեք ցուցանիշ է կիրառվում՝ աղքատների թիվ, ծայրահեղ աղքատների թիվ և աղքատության խզվածքի համաթիվ: Առաջին երկու ցուցանիշներով գնահատման հիմքում եկամտի որոշակի սահման որոշելն է՝ միջազգային աղքատության գիծը (international poverty line), որից ցածր մակարդակի դեպքում մարդը համարվում է աղքատ: 2015 թ. Համաշխարհային բանկի վերլուծություններում առաջին անգամ կիրառվեց այս մեթոդաբանությունը, և աղքատների համար օրական նվազագույն մակարդակ սահմանվեց 3,2, իսկ ծայրահեղ աղքատների համար՝ 1,9 միջազգային դոլարը (international dollar):[3] 2013 թ. համար կատարված վերլուծությունները փաստում են, որ 767 միլիոն մարդ գտնվել է այս սահմա-

[1] Տե՛ս Global Extreme Poverty, by Max Roser and Esteban Ortiz-Ospina, March 27, 2017:

[2] http://armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf

[3] Միջազգային դոլարը պայմանական արժույթ է, որն ունի նույն գնողունակության համարժեքը, ինչ ամերիկյան դոլարն այդ պահին:

նից ցածր:[1] Ըստ նշված ցուցանիշի՝ աշխարհում 100 մարդկանցից 11-ը կամ աշխարհի բնակչության 17%-ն աղքատ է եղել (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ***Աղքատների և ծայրահեղ աղքատների թիվն աշխարհում 1993-2013 թթ. (մլն մարդ)***

Աղքատության խզվածքի համաթիվը ցույց է տալիս փողի այն քանակությունը, որն անհրաժեշտ է աղքատներին՝ այդ սահմանին հասնելու համար: 2013 թ. աշխարհում այն կազմել է 3,2% (տե՛ս գծապատկեր 2):[2]

Հիմնական խնդիրը, որն առաջանում է այս եղանակներով աղքատության մակարդակը հաշվարկելիս, այն է, որ տարբեր երկրներում գների մակարդակը տարբեր է, և նույն գումարով տարբեր երկրներում կարելի է տարբեր քանակությամբ բարիքներ ձեռք բերել: Իհարկե, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ եկամտի և սպառման մակարդակների համեմատության ընթացքում դժվարություններ են առաջանում նաև երկարաժամկետ համեմատություններ իրականացնելիս, քանի որ առկա ապրանքներն ու ծառայությունները նշանակալի փոփոխությունների են ենթարկվում, նույնիսկ ի հայտ են գալիս ամբողջովին նոր ապրանքներ և ծառայություններ:

Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է հաշվարկել տարբեր երկրների սպառման մակարդակները (շուկայական փոխարժեքով) և գնողունակության համարժեքը:

[1] 2013 թվականը համաշխարհային աղքատության ցուցանիշների համապարփակ վերլուծության վերջին տարին է համարվում:

[2] https://ourworldindata.org/grapher/share-of-the-population-living-in-extreme-poverty?country=CHN



Գծապատկեր 2. ***Աղքատության խզվածքի համաթիվն աշխարհում 1999-2013 թթ. (մլրդ դոլար)***

Աղքատության մակարդակի աշխարհագրական կառուցվածքի վերլուծությունը փաստում է, որ աղքատության ամենաբարձր մակարդակն ունեն աֆրիկյան և Հարավային ու Արևելյան Ասիայի երկրները (տե՛ս գծապատկեր 3): [1]



Գծապատկեր 3. ***Աղքատության մակարդակն աշխարհում՝ տարածաշրջանային կտրվածքով***

Գծապատկերից երևում է, որ և՛ աղքատների, և՛ ծայրահեղ աղքատների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն աֆրիկյան և Հարավային Ասիայի երկրները, նրանց հաջորդում են Արևելյան Ասիայի երկրները, իսկ մյուս տարածաշրջաններն ավելի քիչ տեսակարար կշիռ ունեն: Բնակչության մեջ աղքատության ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող երկրներն են Հարավային Սուդանը (69.5%), Ռուանդան (60.5%), Մոզամբիկը (60.2%), ԿԱՀ-ը (79.3%):

Ըստ ՀՀ ԱՎԾ մեթոդաբանության՝ աղքատությունը բաժանվում է 3 խմբի՝ աղքատներ, շատ աղքատներ և ծայրահեղ աղքատներ:

[1] http://iresearch.worldbank.org/PovcalNet/home.aspx

Աղյուսակ 1

***Աղքատության ցուցանիշները ՀՀ-ում** 2004-2016 **թ.**[1]*

Տարիներ	Աղքատներ	Շատ աղքատներ	Ծայրահեղ աղքատներ
2004	53.5	32.6	4.4
2005	40.1	19.6	3.3
2006	30.2	14.2	2.3
2007	26.4	14.5	2
2008	27.6	12.6	1.6
2009	34.1	20.1	3.6
2010	35.8	21.3	3
2011	35	19.9	3.7
2012	32.4	13.5	2.8
2013	32	13.3	2.7
2014	30	10.9	2.3
2015	29.8	10.4	2
2016	29.4	9.8	1.8

Աղյուսակից երևում է, որ աղքատության մակարդակը 2004-2016 թթ. աստիճանաբար նվազել է՝ չհաշված 2009 թ. աղքատության աճը, որը պայմանավորված է եղել համաշխարհային ճգնաժամով: Աղքատության հաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 63.2 մլրդ դրամ կամ ՀՆԱ 1.2%-ը կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների՝ ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին:

ԱՎԾ տվյալների համաձայն՝ 2016 թ. Հայաստանի բնակչության 29,4%-ը աղքատ էր, որից 9,8%-ը շատ աղքատ և 1,8%-ը ծայրահեղ աղքատ: Վերլուծելով ՀՀ-ում աղքատության աշխարհագրական կառուցվածքը՝ կտեսնենք, որ աղքատության մեծ տեսակարար կշիռ ունեն Շիրակի (մարզի բնակչության 45,5%-ն աղքատ է), Կոտայքի (35,4%), Լոռու (35.8%) և Տավուշի (33.8%) մարզերը: Այս մարզերում համեմատաբար բարձր է ծայրահեղ աղքատների թվաքանակը. Շիրակում՝ 3.7%, Կոտայքում՝ 1.3%, Լոռիում՝ 2.7% և Տավուշում՝ 1.9%: Մյուս մարզերում, այս մարզերի համեմատությամբ, աղքատության վիճակն ավելի բարվոք է:

Աղքատությունը համարվում է երկրների կառավարությունների հիմնական խնդիրներից մեկը: Դրա համար կառավարությունները մշակում են աղքատության դեմ պայքարի քաղաքականություն, որպիսին է՝ պետության կողմից տրանսֆերտների վճարումը անապահով ընտանիքներին:[2] Սա աղքատության դեմ պայքարի ամենատարածված ձևն է, որով ավելանում են անապահով ընտանիքների եկամուտները, և նրանք կարողանում են մեծացնել իրենց սպառման մակարդակը ու ձեռք բերել տարրական կարիքների բավարարման համար անհրաժեշտ բարիքներ: Աղքատությունը նվազեցնելու մեկ այլ ձև է գյուղատնտեսական ծրագրերի իրականացումը: Գյուղատնտեսության զարգացումը հնարավորություն է տալիս ոչ միայն բավարարել սեփական կարիքները, այլ նաև դրանց վաճառքից ստանալ եկամուտ: Այդպիսի ծրագրեր է իրականացնում Չինաստանը, որտեղ The Agricultural Bank of China ընկերությունը պատրաստվում է 400 միլիարդ դոլար վարկ տրամա-

[1] http://armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf
[2] https://ourworldindata.org/extreme-poverty

դրել գյուղատնտեսության զարգացման համար: 1978 թվականից Չինաստանում իրականացվում են այսպիսի ծրագրեր, որոնց արդյունքում արդեն 800 միլիոն մարդ հաղթահարել է աղքատությունը:[1]

Աղքատության դեմ պայքարի ձևերից է նաև երկրների միջև առևտրի զարգացումը: Այդպիսի ծրագրեր է իրականացնում Եվրամիությունը:[2] Արտաքին առևտրի զարգացումը հնարավորություն կտա նոր ներդրումներ կատարել երկրում, որի շնորհիվ կբացվեն աշխատատեղեր և աղքատներին հնարավորություն կընձեռվի աշխատել և ստանալ եկամուտ: Բացի դրանից, աղքատ երկրներում բարիքների գները, զարգացած երկրների համեմատ, ավելի ցածր են, և արտահանելով աղքատ երկրներում ստեղծված բարիքները՝ հնարավոր կլինի դրանք վաճառել ավելի ցածր գնով:

Աղքատության դեմ պայքարի ամենաարդյունավետ ձևերից է երկրում տնտեսական աճի ապահովումը: Աշխարհի տարբեր երկրների վիճակագրական տվյալների վերլուծությունները վկայում են, որ երկրում 10% եկամտի աճը հանգեցնում է 20-30% աղքատության նվազման:[3]

Աղքատության նվազեցման ձևերից է նաև սոցիալական պաշտպանության համակարգի և ենթակառուցվածքների զարգացումը, որի շնորհիվ հնարավորության կստեղծվի երկրում ներդրումների ավելացման, հետևաբար՝ երկրում աղքատության մակարդակի նվազեցման:[4]

Ըստ ԱՎԾ տվյալների՝ ՀՀ ամենաբարձր աղքատության ցուցանիշով մարզերից գյուղատնտեսական ապրանքների արտադրության փոքր ծավալներ ունեն՝ Շիրակը՝ 101,7 մլրդ դրամ, Կոտայքը՝ 60,4 մլրդ դրամ, Լոռին՝ 69,2 մլրդ դրամ և Տավուշը՝ 39,6 մլրդ դրամ (համեմատության համար նշենք, որ Արարատում արտադրվում է 134,9 մլրդ դրամի, իսկ Արմավիրում՝ 176,5 մլրդ դրամի արտադրանք):[5] Պետության գործողություններից պետք է լինեն գյուղատնտեսական ենթակառուցվածքների ներդրումը, գյուղվարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը, գյուղատնտեսական ապրանքների արտադրողականության բարձացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, ինչպես օրինակ՝ գյուղացիներին ավելի բերքատու սերմատեսակներ տրամադրելը:

Աղքատության հաղթահարման մյուս ձևը արտաքին առևտրի զարգացումն է: ԱՎԾ տվյալների համաձայն՝ այս 4 մարզում արտահանված բարիքների քանակությունը կազմել է՝ Շիրակում՝ 3466 մլն դրամ, Կոտայքում՝ 30414 մլն դրամ, Լոռիում՝ 93296 մլն դրամ և Տավուշում՝ 3682 մլն դրամ (համեմատության համար նշենք, որ Արարատից արտահանվել է 61899 մլն դրամ, իսկ Արմավիրից 65552 մլն դրամ արտադրանք): Այստեղ բացառություն է կազմում Լոռու մարզից արտահանված բարիքների քանակությունը, որը բավականին մեծ է: Դա պայմանավորված է Ալավերդու պղնձաձուլական գործարանի գործունեությամբ: Պետությունը պետք է այս մարզում իրականացնի ներդրումներ ներգրավելու ծրագրեր, ինչպես օրինակ՝ բիզնես միջա-

---

[1] http://www.scmp.com/news/china/article/1202142/chinas-formula-reduce-poverty-could-help-developing-nations

[2] https://www.devex.com/news/10-ways-the-new-eu-trade-chief-can-help-reduce-poverty-in-developing-countries-84458

[3] http://www.oecd.org/derec/unitedkingdom/40700982.pdf

[4] http://www.un.org/esa/socdev/wssd/text-version/agreements/poach2.htm

[5] http://armstat.am/file/article/marz_2017_13.pdf

վայրի բարելավմանն ուղղված կամ բիզնես վարկերի տոկոսադրույքների նվազեցում: Այս մարզերում վատ է նաև աշխատանքի շուկայի վիճակը: Շիրակի մարզում գործազրկության մակարդակը հավասար է 21%-ի (22 հազար մարդ), Կոտայքում՝ 21,8%-ի (24 հազար մարդ), Լոռիում՝ 12,3%-ի (13 հազար մարդ) և Տավուշում՝ 12,5%-ի (7 հազար մարդ):[1] Այսպիսով, ներդրումային ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա ստեղծել աշխատատեղեր, և գործազրկության մակարդակի նվազումը կնպաստի աղքատության մակարդակի նվազմանը:

АЛИК ТОРОСЯН

ПРОБЛЕМЫ БЕДНОСТИ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ

Ключевые слова: *бедность, крайняя бедность, индекс бедности, региональная структура бедности.*

Бедность является одно из основных показателей, которая характеризует экономику государства. Государства направляют все свои ресурсы для уменшения уровня бедности. Существует несколько способов для преодоления бедности, например: трансфертные программы, реализация сельскохозяйственных программ развитие внешней торговли и т.д. В Армении проблема уровня бедности выше в четырёх регионах: Ширак, Тавуш, Лори и Котайк. Государство должно напровит для уменшения уровня бедности в этих регионах.

ALIK TOROSYAN

POVERTY PROBLEMS AND WAYS TO OVERCOME IT

Key words: *poverty, extreme poverty, poverty incidence index, regional poverty structure.*

The poverty is one of the main indicators of the state's economy. States direct their own resources in order to reduce poverty level in the country. There are several ways to overcome poverty, for example targeted transfer programs, implementation of agricultural projects, development of foreign trade and etc. In Armenia the problem of poverty is big in four regions: Shirak, Tavush, Lori and Kotayk. The government should implement its main measures to reduce poverty in these regions.

ԱՆԱՀԻՏ ԺԱՄՀԱՐՅԱՆ
Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում, բակալավրիատ, 3-րդ կուրս

ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

Հիմնաբառեր. *ներդրում, ներդրումային միջավայր, տնտեսական աճ, գործարար միջավայր, ներդրումային ռիսկ, միջազգային ներդրումային դիրք, օտարերկրյա ուղղակի ներդրումներ*

Հոդվածում անդրադարձ է կատարվել «ներդրումներ» և «ներդրումային միջավայր» հասկացություններին, ներդրումային միջավայրի գնահատման մեթոդաբանու-

[1] http://armstat.am/file/article/marz_2017_16.pdf